

616.5

b-58



08 APR 2013

30 JUL 2010

ԲԺՇԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԶԼՈՒՀՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

616.5 ՏՂԵՄԱՐՅԻ

Ե-58  
Մ.

# ՏՐԻՊԵՐԸ

(Ս ուսունակ)

ԵԽ ՆՐԱ ԲԺՇԿԱԿԱՆ ԹԻՒԾ

ՊԱՏԿԵՐԱԳԱՐԴ

Ա. Հրատարակութիւն

Կ Ա Զ Մ Ե Ց

Մէղիցինայի Փէլդէք մասսաժիստ  
Յարուբիւն (ԱՐՑԷՄ) Եսայեան

1906  
27-157

ԹԻՖԼԻՍ  
ԽԵԿԱՐԱՍՄԱՆ ՏՈՒՄԱՆ ԱՐՄԵՆԻԱՆ ՊՈԽԻ 7



I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ոչ ոքի համար գաղտնիք չէ. որ բաղաքակրթութեան և լուսաւորութեան հետ համահաւասար կերպով առաջ են գնում և աւելի մեծ չափերով տարածվում վեներական հիւանդութիւնները։ Դժուար թէ զըտնվի մի մարդ, նոյնիսկ գաւառական խուլանկիւններում ապրող։ որը լսած չը լինի վեներական հիւանդութիւնների անունները և գաղափար չունենայ նրանց մասին։ Բացարձակ և առանց կեղծ ջէնտլմէնութեան պէտք է ասենք, որ ներկայումս մարդկութեան մեծ տոկոսը վարակված է վեներական որևէ հիւանդութեամբ։ Ամեն մի պատահող կամ պացիէնտ խօսում և խորհուրդ է հարցնում սիֆիլիսի, շանկը, բուբոնի և տրիպէրի մասին։ Ներկայ հասարակական կեանքի գայթակղեցնող և ապականիչ բազմաթիւ պայմանները, խորտակելով ընտանեկան առողջ և բարոյական կեանքի երջա-

նիկ հիմունքները, յանուն էստէտիկայի և  
սանձարձակ ազատամտութեան՝ մարդկանց  
դեռ մանուկ հասակից գայթակղեցնում և  
նետում են սեռական ցոփ կեանքի ձիրան-  
ները։ Պոռնկութեան և վեներական ախտե-  
րի դառնախօս ստատիստիկան հաստատում  
է մեր ասածը. անհերքելի փաստ է, որ մարդ-  
կութիւնը աստիճանաբար այլասեռվում է։  
Ամուսնական մաքուր կեանքի և ընտանիքի  
քայքայման պատճառով, մարդիկ դեռ ֆի-  
զիքապէս չը հասունացած, պատանի հասա-  
կից սկսում են հասարակական տները յա-  
ճախել և կամ փողոցներում գիշերները ա-  
նառակ կանանց որսալ։ Բաւական չէ, որ  
չամուսնացած երիտասարդներն են դառնում  
հասարակական տների մշտական անդամներ  
և փողոցներում վիստացող բազմաթիւ կա-  
նանց որսորդներ, այլև ամուսնացած, կնոջ  
և զաւակների տէր մարդիկ էլ են յաճախում  
անառականոցները և այլ անբարոյական տե-  
ղեր, և դիւրութեամբ վարակվելով կեղտոտ  
ախտերով, վարակում են իրանց կանանց.  
այսպիսով տուժում են ոչ միայն անհատ-  
ները, այլև քայքայվում է ընտանեկան սուրբ

կեանքը, պղծվում է ամուսնական առագաս-  
տը և սերունդը այլասեռվում։


Վեներական ախտերից, որոնք են սիր-  
ֆիլիս, շանկը և տրիպէր, ամենատարած-  
վածն է վերջինը. այսինքն տրիպէրը (սու-  
սունակ)։ Թէ տղամարդկանց և թէ կանանց  
մեծ մասը վարակված է կամ թէ եղել է  
վարակված տրիպէրով։ Սյս հիւանդութիւնը  
ինքնածին չէ, այլ անցնող, վարակող։ Հի-  
ւանդութիւններից շատերը վարակիչ են շը-  
նորհիւ փոքրիկ, հասարակ աչքերին անտե-  
սանելի կենդանիների, որոնք կոչվում են

միկրօբներ  
կամ բացիլներ։  
Սրանք տեսանե  
լի են դառնում  
միմիայն ման-  
րադիտակի

(МИКРОСКОПЪ)

տակ։ Իւրա-  
քանչիւր հի-  
ւանդութեան  
բացիլ ունի  
բացիլ ունի

1) Տրիպէրի թարախը և նրա մէջ գտն-  
վող միկրօպները—գօնօկոկկները։



Նկար 1.

Տրիպէրի վարակող բացիլը կոչվում է գօնօկոկ: Երբ տղամարդը սեռական մերձաւութիւն է ունենում տրիպէրով վարակված կնոջ հետ, գօնօկօկները շփման միջոցին թափանցում են միզանքը և այդպիսով հիւանդութիւնը պատվաստում: Եթէ տղամարդն է հիւանդ տրիպէրով, նա կառող է վարակել առողջ կնոջը. ուրեմն տրիպէրի վարակումը լինում է փոխադարձաբար:

Տրիպէրն այնքան տարածված և սովորական ախտ է դարձել, որ յաճախ մարդիկ նրան լուրջ նշանակութիւն չեն տալիս և պառաւական դեղերով կամ թէ «բարեսիրտ» ընկերների ձէռքէձեռք անցնող բէցէպտներով են բաւականանում, որով աւելի հնացնում են ցաւը և դարձնում խրօնիբարական: Մինչդեռ տրիպէրը չը բժշկվելու դէպքում լուրջ հիւանդութիւն է և կարող է առաջացնել այլև այլ բարդութիւններ ծանր հետևանքներով:



## II ՏՐԻՊԷՐԻ ՎԱՐԱԿՄԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ ԵՒ ՀԵՏԵԿԱՆՔՆԵՐԸ

Երբ գօնօկօկները մտնում են առնանդամի միզանցքը, նրանք բոյն են դնում այնտեղ և բազմանում են: Ապա նրանք վընասում և բորբոքում են միզանցքի թաղանթը: Ուրիշ խօսքով տրիպէրը ոչ այլ ինչ է, եթէ ոչ միզանցքի թաղանթի բորբոքումը: Տրիպէրը իսկոյն չէ բացվում, այլ վարակման ժամկից անցնում է որոշ ժամանակամիջոց մինչև հիւանդութեան երեալը: Այս միջոցը տեսում է սովորաբար 2–7 օր և կոչվում է սկզբնական գաղտնի շրջան (ինկுբացիոնայ ուրօդք), Գօնօկօկների սիրած տեղը մեծ մասամբ միզանցքում անդամագլխից փոքր ինչ հեռու է, թլպատակապիուղութեամբ: Համարեա միշտ տրիպէրի այրոցը և ցաւերը կնդրոնանում են այդտեղում: Թոյնի ներս ընկնելուց միքանի օր յետոյ միզանցքում զգացվում է մի տեսակ

զգայնութիւն և խտանք, որ յաճախ նման  
է հեշտանքի զգացմունքին։ Ոմանք զգում  
են մի տեսակ ծանրութիւն յետանցքի մէջ,  
աճուկներում. շատերն էլ գանգատվում են  
ձնշված և վատ տրամադրութեան վրայ։ Հե-  
տզհետէ խտանքը փոխվում է ցաւի. այ-  
նուհետև՝ վարակված մարդը միզելիս զգում  
է այրոց և ցաւ, որոնք գնալով աւելի են  
սաստկանում։ Սրանք շուտով համնում են  
այն աստիճանի, որ հիւանդը տանջվում է  
միզելիս. նա խուսափում է միզելուց և աշ-  
խատում է մէզը երկար պահել։ Միզելու  
ժամանակ ցաւի և այրոցի աւելի սաստկա-  
նալը բացատրվում է նրանով, որ մէզի անց-  
նելիս նրա մէջ գտնվող զանազան աղերը և  
լուծվածքները գրգռում են տրիպէրի խոցը  
և ուժեղացնում բորբոքումը։ Շուտով ուռ-  
չում են միզանցքի վերջաւորութիւնը և ան-  
դամի շրթունքները, որոնք կարմրում են և  
զգայուն դառնում։ Ապա միզանցքից երե-  
վում է կաթիլ-կաթիլ՝ բաց-դեղնականաչա-  
գոյն թարախ, որը օրէցօր թանձրանում է,  
կանաչ գոյն ստանում և առատօրէն հոսում։  
Հոսանքը շարունակաբար լինում է թէ ցե-

րեկ և թէ գիշեր։ Այդ թարախը վարակիչ  
է, որովհետև նրա մէջ գտնվում են արի-  
պէրի բացիները-գօնօկօկները։ Յաճախ թա-  
րախի հետ երկում է և արիւն։ Տրիպէրի այս  
շրջանը, առատ թարախահոսութեամբ, այրո-  
ցով և ցաւելով, կոչվում է սուր կամ սրբն-  
թաց շրջան։ Այս ժամանակ տրիպէրի վէր-  
ըլի շնորհիւ յաճախ անդամը փոքր ինչ ծրո-  
վում է գլխի մօտից, այս բանը աւելի նկա-  
տելի է լի-  
նում ան-  
դամի գրը-  
գոված  
միջոցին,  
այսինքն  
կանգնու-  
մի ըոպէ-  
ին։ Գի-  
շերները



Նկար 2

2.) Տրիպէրով հիւանդ առնանդամ, որը անկող-  
փոքրէնչ ծովել է և թարախը հստում է նում, եր-  
նրա մէջից։

բեմն էլ

ցերեկը, անդամը շարունակ կանգնում է և  
շատ անհանգստացնում հիւանդին, նոյնիսկ

այն աստիճան, որ քունը կտրվում է և հիւանդը անց է կացնում անքուն գիշերներ։ Այս հանգամանքը կարող է վատ ազդել թուլակազմ հիւանդի վրայ, մաշելովն ըստ Երբեմն էլ տեղի է ունենում և կրկնվող երազախաբ, որը նոյնպէս անհանգիստ է անում հիւանդին։ Ընդհանրապէս սուր տրիպէրի բորբոքված նըշաններն ու ցաւերը տևում են 10—20 օր։ Այնուհետև այրոցը և ցաւերը նուազում են, միզելիս միայն զգալի է լինում թեթև ծակոց. անդամի ցաւոտ կանգնումը տեղի է ունենում ուշ-ուշ և թարախն էլ պակասում է, դառնում է դեղնա-սպիտակագոյն, և վերջի վերջոյ ստանում է լորձունքի կերպարանք։ Այս հանգամանքը նշան է տրիպէրի բարեյաջող վախճանի։ Եթէ հիւանդը բժշկվում է բանիմաց և բարեխիղճ բժշկի մօտ, կատարելով նրա տուած ցուցմունքները, այն ժամանակ տրիպէրը բժշկվում է 5—8 շաբաթում, ուրիշ խօսքով 1—2 ամսի ընթացքում։ Իսկ երբ հիւանդը գործ է ածում տնային հէքիմների վասակար գեղերը և չի պահում ուտելիքի-խմբելիքի որոշ բէժիմ, դիէտա, այն ժամանակ տրիպէրը չէ բժշկվում և դառնում

է խրօնիքական, այսինքն երկարատև։ Առաջասարակ, երբ տրիպէրը անուշադիր մնալով, իր գոյութիւնը պահում է 2 ամիս, նա անպայման խրօնիքական բնաւորութիւն է ստանում։ Այսպիսի դէպքերում նրա բունը կարող է լինել թէ միզանցքի սկզբում և թէ վերջում։

Հնացած կամ խրօնիքական տրիպէրի ժամանակ բացակայում են սուր տրիպէրի խիստ արտայայտութիւնները. Թարախը հոռում է շատ քիչ քանակութեամբ, օրական միքանի կաթիլ, և այն էլ սեծ մասամբ քընից յետոյ առաւօտեան է երկում միզանցքի ծայրին։ Սակայն օդիի, գարեջրի, երազախարի ու սեռական կրկնվող մերձաւորութիւնների ազդեցութեան ներքոյ թարախը կարող է շատանալ, և ընհակառակն, չափաւոր կենցաղավարութեան ու ժուժկալութեան միջոցին կարող է գրեթէ անհետանալ։ Բայց և այնպէս հիւանդը միզանցքի մէջ միշտ զգում է մի տեսակ անհետանալ։ Պայց և այնպէս հիւանդը միզանցքի մէջ միշտ զգում է մի տեսակ անհօրմալ զգացմունք, ծանրութիւն յետանցքում և շատ ուշ միզելիս՝ այրոց։ Դժբաղդ կը լինի այն մարդը, որ ժամանակին հիմնաւորապէս չի

բժշկիլ սուր տրիպէրը և նրան կը դարձնէ խրօնիքական. և աւելի թշուառ է նա, ով ունի խրօնիքական տրիպէր, ու նրան մի չնչին ցաւ համարելով, չի դիմիլ հմուտ բը- ժշկի օգնութեանը. Պէտք է գիտենալ, որ թէ սուր եւ թէ խրօնիքական տրիպէրը ան- պայման բուժելի է, եթէ միայն հիւանդը ամբողջովին նուրիրվի բժշկութեան և ճշտիւ կատարէ բժշկի խորհուրդները, իսկ եթէ բը- ժշկվելիս նա շարունակէ հարբեցողութիւն, անբարոյականութիւն և աննօրմալ կեանք, դրանով բժշկի շինածը ինքը կըքան- դէ, և արիպէրը ամուր կը մնայ իր տե- ղում:

Ահա թէ ինչ է ասում պրօֆ. Պէտէր- սօնը խրօնիքական տրիպէրի մասին. «Թոյ- նը, ապրելով օրգանիզմի մէջ, չէ կարող չը քայքայել նրան: Նա այս կատարում է դան- դաղ, աստիճանաբար, աննկատելի կերպով, բայց և այնպէս նա անում է այդ բանը: Եւ իրօք. հիւանդը ժամանակի ընթացքում դառ- նում է թմրած, խղճալիք նրա մէջ երեան են գալիս մելամաղձոտութիւն և անբացատ- րելի թախիծ: Նրա եռանդը հանդչում է. նա

վերջի վերջոյ դառնում է ֆիզիքական ու մտաւոր երկարատև աշխատանքի անընդու- նակ: Զղայնութեան մի շարք երեսյթներ զարգանում են խրօնիքական տրիպէրի հո- ղի վրայ: Այս հիւանդութիւնը, որ հասարա- կութիւնը սովորել է համարել «անշան», մինչև անդամ «չնչին», կըկնում ենք, ներ- գործում է գրականապէս: Նրա վերջնական հետեւանքը լինում է ամբողջ կազմվածքի ա- ւելի կամ պակաս քայքայումն»:



### III ՏՐԻՊԵՐԻՑ ԱՌԱՋԱՅԱԾ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

#### 1. ՏՐԻՊԵՐԻ ԱՌԱՋԱՅԱՂԱՅՈՒԹԻՒՆԸ

Միզանցքի սկզբի մասից թարախի հետ գոնօկոկները կարող են գնալ դէպի միզանցքի խորքերը և այնտեղ էլ բանալ տրիպէրի վէրք։ Այսպիսով հիւանդութիւնը կրկնապատկվում է և գործը աւելի լուրջ կերպարանք ստանում։ Թարախահոսութիւնը, այրոցը, ծակոցներն ու ցաւերը կրկնակի սաստկանում են և բաւական ընկճում հիւանդին։ Այն ժամանակ կարող է առաջ գալ տաքութիւն, անհանգիսա դրութիւն և դիւրազգացութիւն։

#### 2. ՇԱԳԱՆԱՍԿՁԵՒ ԳԵՂՁԻ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ

Գոնօկոկները դիւրութեամբ կարող են անցնել դէպի գեղձերը և նրանց բորբոքելու

Ամենից յաճախ բորբոքվում է շագանակածն գեղձը. որ գտնվում է յետանցքի և միզանքի միջավայրում։ Հետզհետէ նա ուռչում է, ցաւում և հիւանդին նեղութիւն պատճառում։ Արտաթորելիս յետանցքի մէջ զգացվում է ճնշող ծանրութիւն և ցաւ, որ տարածվում է դէպի աճուկները և միզանցքը, երբ շագանակածն գեղձը շատ է ուռչում, մեծանում և միզանցքը նեղացնում, այն ժամանակ գիտւարանում է միզելը. մէզը հոսում է բարակ հոսանքով և երբեմն էլ կաթիւ-կաթիւ. Գեղձի խիստ բորբոքումից նրա մէջ կարող է գոյանալ թարախ, որը բացվում է մեծ մասամբ դէպի միզանցքը, իսկ հազուադէպ նաև դէպի յետանցքը։ Անհրաժեշտ է զիտենալ, որ շագանակածն գեղձի մէջ տրիպէրի թարախը կարող է մնալ շատ երկար ժամանակ և այդպիսով օժանդակել խրօնիքական տրիպէրի գոյութեանը։ Ուստի տրիպէրի բժշկութեան միջոցին բըժիշկը շագանակածն գեղձին մասսաժ է անում յետանցքից, որով թէ իջեցնում է նրա բորբոքումը և թէ ճնշումով դուրս վընտառում նրա մէջ թագնված թարախը։

3. ԱՄՈՐՁԻՔՆԵՐԻ (ՉՈՒԱՆԵՐ) ԲՈՐԲՈՔՈՒՄՆ

Տրիպէրի յաճախակի բարդութիւններից մէկն էլ ձուաների բորբոքումն է։ Սա գըլ-խաւորապէս առաջանում է հիւանդի հակա-բժշկական կենցաղից և աւելորդ շարժողու-թիւններից։ Օրինակ, երբ տրիպէր ունեցած ժամանակ հիւանդը գործ է ածում օղի, գի-նի, գարեջուր, երբ նա ոտքով շատ է ման-գալիս, ձի է հեծնում, կամ սուսանակի մի-ջոցին շարունակում է յաճախել կանանց մօտ, համարեա անխուսափելի կերպով ստա-նում է ամորձիքների բորբոքում։ Բացի վե-րոյիշեալ պատճառներից, երբ հիւանդը ին-քնիրան սրսկութներ է կատարում, բայց չը զիտէ այդ գործողութեան անհրաժեշտ պայ-մաններն ու ձևերը, առաջացնում է ձուա-ների բորբոքումն։ Սովորաբար բորբոքվում է մէկ ձուն և շատ քիչ դէպքերում երկու-սը միասին։ Իրօք ձուն չէ հիւանդանում սկզբից, այլ նախ բորբոքվում է մակամոր-ձիքը, որ ուռչում է, ցաւում, հաստանում և որի ցաւերը անցնում են ձուին, որը յե-տոյ միայն ուռչում է և ցաւում. այս բա-

նը շատերը չը գիտեն, ուստի և կարծում են, թէ բորբոքվել է ձուն։

Ամորձիքի, աւելի ճիշտը մակամորձի-քի, բորբոքման միջոցին նկատվում են զըր-գոված դրութիւն, տաքութիւն, ձնշված տը-րամազը ութիւն և ջղային երևոյթներ։ Բոր-բոքված ձուն հետզհետէ ուռչում է, մեծա-նում և ցաւում։ Յետանցքում և շէքերի մէջտեղում զգացվում է ծանրութիւն, ծա-գում է շուտ-շուտ միզելու ցանկութիւն։ Երբեմն էլ գիշերը տեղի է ունենում ցա-ւուտ երազախար։ Վերջի վերջոյ ուռոյցքը և ցաւը հասնում են այն աստիճանի, որ հի-ւանդը սաստիկ տանջվում է, զրկվում քնից ու կերակրից։ Իւրաքանչիւր թեթև շարժու-մըն անգամ սաստիկ ցաւ է պատճառում։ ոտքը ոտքից չի կարողանում փոխել և ստիպ-ված է լինում անկողին մտնել։ Ուռոյցքը կարող է հասնել բոռնցքի մեծութեան, որի ժամանակ կարմրում, ուռչում է նաև ա-մորձիքապարկը։ Կատաղի ցաւերն ու տան-ջանքները սովորաբար տեսում են միքանի օր, որից յետոյ կամ իրանքիրանց և կամ դեղերի աղդեցութեամբ նուագում են ու



հանգիստ տալիս հիւանդին։ Երբեմն նրանք վերանորոգվում են զանազան պատճառներից, օրինակ՝ ուժեղ շարժումներից, պարելուց, մրսելուց, ձուաների կապ չըկրելուց, սեռական յարաբերութիւններից և այլն։ Պէտք է ասենք, որ ձուն բորբոքվելուց և բժշկվելուց յետոյ յաճախ կարող է անընդունակ դառնալ սերմնակենդաններ արտադրելու։ իսկ եթէ երկու ձուերն էլ բորբոքվեն, մարդ կը դառնայ ամոլ. այնուհետև նա չի կարող դաւակներ արտադրել. նըրա սերմը չի կարող բեղմնավորել։ Բացի այդ յաճախ բորբոքումից յետոյ մակամորձիքը մնում է կարծրացած, սերմնատար խողվակները սղմված և կծկված։

#### 4. ՄԻԶԱՊԱՐԿԻ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ

Վարակիչ թարախը մտնելով միզապարկը, գրգռում է պարկի թաղանթը և բորբոքում։ Հիւանդը ցաւեր է զգում միզանցքի խորքերում, անհանգիստ է լինում և շուտ շուտ կարիք զգում միզելու. սակայն իւրաքանչիւր անգամ հոսում է շատ

քիչ մէզ, նոյնիսկ միքանի կաթիլ։ Բորբոքված միզապարկի մէզը միշտ լինում է պըղտոր. և եթէ այդ մէզը բաժակում լցված մնայ երկար ժամանակ, նրա յատակում կը նստեն բաւականաչափ տականք և թարախութ մասնիկներ։

#### 5. ԽՈՇՈՐ ԹԱՐԱԽԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻԶԱՆՑՔՈՒՄ

Սուսունակի թոյնը բացի բորբոքում առաջացնելուց միզանցքի մէջ որևէ է տեղում կարող է բանալ խոր վէրք, որը հետզետէ մեծանում է, ուռչում և լցվում թարախով։ Վերջի վերջոյ ուռոյցքը պատռվում է և թարախը գուրս հոսում։ Թարախը բացվում է կամ միզանցքում և կամ թէ շէքերի արանքում, անդամի արմատի տակ. այսպիսով գոյանում է մի ուրիշ անցք միզախողովակից գէպի շէքերը, որտեղից հոսում է թարախ, արիւն և մէզ։ Բարեբաղդաբար այս երևոյթը տրիպէրի հազուադէպ բարդութիւնն է, որը սակայն ծանր է և երկարատև։ Եթէ հիւանդը կանոնաւոր կերպով

չը բժշկվի, այն ժամանակ վէրքի շնորհիւ  
կարող է առաջանալ արեան թարախոտ վա-  
րակումն:

#### 6. ԱՐԻՒՆՀՈՍՈՒԹԻՒՆ ՄԻՋԱՆՑՔԻՑ

Երբ տրիպէրի խոցը խորունկ է լինում,  
այն ժամանակ թարախի հետ երեսում է նաև  
արիւն, որը հոսում է քիչ քանակութեամբ,  
կաթիլ կաթիլ: Եթէ հիւանդը իրան հանգիստ  
չէ պահում և շարունակ շարժողութիւննե-  
րի մէջ է, այն ժամանակ արիւնհոսութիւ-  
նը կարող է աւելանալ: Արիւնը երբեմն ե-  
րեսում է նմեն միզապարկի խիստ բորբոք-  
ված միջոցին:

#### 7. ԱԶՔԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ ՍՈՒՍՈՒՆԱԿԻՑ

Եթէ տրիպէրով հիւանդը մի անմաքուր  
մարդ է, նա հեշտութեամբ կարող է վա-  
րակել իր աչքերը տրիպէրի թարախով, նա-  
մանաւանդ, որ աչքերը սաստիկ տրամադրը-  
ված են վարակվելու սուսունակի թոյնով:  
Երբ թարախոտ ձեռքերով շփում են աչքե-

ըլ, թարախը քսվում է աչքերին և բորբո-  
քում նրանց թաղանթը: Նրանց արանքից  
հոսում է թարախ, որը սկզբում արիւնա-  
նման և ջրալի է լինում, իսկ յետոյ դառ-  
նում է թանձր, կանաչագոյն և նմանվում է  
սուսունակի թարախին: Աչքերի տակ առա-  
ջանում են ցաւեր, որոնք տարածվում են  
գէպի ճակատը և ծոծրակը, Հիւանդը ընկ-  
նում է անհանգիստ դրութեան մէջ, կորց-  
նում է քունը, երբեմն տաքութիւն տալիս:  
Եթէ անուշաղիր թողնել հիւանդութիւնը,  
կարելի է զրկվել տեսողութիւնից. ուստի  
աչքերի բորբոքման դէպօւմ իսկոյն պէտք  
է դիմել ակնաբոյժի: Քանի որ ներկայումս  
տրիպէրը սաստիկ տարածված է և կանանց  
մէջ, ուստի այժմ քաղաքակիրթ տեղերում  
երեխայի ծնվելու ժամանակ իսկոյն մի տե-  
սակ դեղ են կաթեցնում աչքերի մէջ. սա  
այն նպատակով է, որ եթէ մօր բունցը  
տրիպէրով կամ այլ հոսանքով վարակված  
լինի, երեխան անցնելիս թարախը կարող է  
քսվել նրա աչքերին ու վարակել. ուստի նա-  
խազգուշութեան նպատակով էլ կաթեցվում  
է յիշեալ դեղը:

## 8. ԵՐԻԿԱՄՈՒԽՆԲՆԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ

Տրիպէրի թոյնը երբեմն միզանցքից, միզապարկով ու միզաբեր խողովակներով բարձրանում է դէպի երիկամունքները և նրանց հիւանդացնում: Երիկամունքների բորբոքումը, ինչ պատճառից էլ որ ծագած լինի, լուրջ հիւանդութիւն է. բացի այդ մէկ անգամ արդէն հիւանդացած երիկամունքները տրամադրվում են թեթև պատճառներից նորէն բորբոքվել: Նրանց մէջ կարող է գոյանալ խոշոր ու մանր թարախակալութիւններ, որոնք բժշկվում են օպէրացիայի միջոցով և երբեմն կործանում հիւանդի կեանքը:

## 9. ՅՈԴԵՐԻ ՍՈՒՍՈՒՆԱԿԱՑԻՆ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ

Տրիպէրի ժամանակ երբեմն բորբոքվում են նաև մարմի այլ այլ յօդերը: Գօնոկօկները արեան կամ աւշային անօթների միջոցով ճանապարհորդում են և ընկնելով որևէ յօդի մէջ, բորբոքում են նրան: Գօնոկօկի սիրած տեղն է ծնկների ծալուածքը, ուստի աւելի յաճախ բորբոքվում են ծնկայութերը, իսկ հազուադէպ՝ ոտքերի, արմունկների, ուսերի և այլ յօդերը: Նկատված է, որ յօդերի սուսունակային բորբոքումը աւելի պատահում է տղամարդկանց մէջ, քան թէ կանանց: Մեծ մասամբ վնասվում է միայն մէկ յօդը: Տրիպէրի սկզբում կամ վերջում, առանց որևէ նախանշանների յանկարծ յօդի մէջ զգացվում է ցաւ և ուսոյցք: Յօդի շարժողութիւնը հետզհետէ դժուարանում է և ցաւեր առաջացնում: Ուսոյցը ըրագ զարգանում է և բաւական մեծանում: Բորբոքման սկզբին ուսոյցքի կաշին իր բընական գոյնը չէ փոխում. սակայն երբ ուսոյցը մեծանում է, հասունանում, այն ժամանակ առաջ են գալիս սուր բորբոքման նշանները, այսինքն կաշին կարմրում է, ուսուած յօդի ջերմութիւնը բարձրանում, արեան անօթները լցվում են: Պատահում է, որ այս շըջանում միզանցքի թարախահոսութիւնը պակասում է: Տրիպէրային հասունացած յօդացաւը նմանվում է սուր բէվմատիզմի յօդացաւին, Այս երկու դէպքերը միմիանցից որոշելը դժուար չէ. երբ մարդ

ունի տրիպէր, որի ժամանակ յանկարծ առանց ցաւի և ջերմի որևէ յօդը ուռչում է, դա անպայման տրիպէրային բորբոքումն է։ Բացի ադ տրիպէրային յօդացաւը մնում է երկար միջոց և դժուար է բժշկվում։ մինչդեռ բէվմատիզմի յօդացաւը շատ շուտ անցնում է սօլիցիլեան նատրի ու թթւուտի գործածելուց։

#### 10. ՄԻԶԱՆՑՔԻ ՆԵԴՐԻԹԻԿՆ (ՍՏՐԻԿՏՈՒՐԱ)

Տրիպէրի տանջող հետևանքներից մէկն է միզանցքի նեղութիւնը։ Միզանցքի պատերը սուսունակի թոյնի ներգործութիւնից կոպտանում են, հաստանում, կծկվում և այդպիսով անցը նեղացնում։ Սուր տրիպէրի միջոցին առաջացած ստրիկտուրան մեծ մասամբ ժամանակաւոր է լինում և անցնում է տրիպէրը բժշկվելուն պէս։ սակայն խրօնիքական տրիպէրից առաջացած միզանցքի նեղութիւնը երկարատև է լինում և չէ անցնում առանց մասնաւոր բժշկութեան։ Նեղանալ կարող է միզանցքի թէ առաջին և թէ յետին մասը։ Այն ժամանակ

մէզը չէ կարողանում ազատ կերպով և իր բնական քանակութեամբ դուրս հոսել, այլ նա անցը սովորած լինելու պատճառով հոսում է նեղ հոսանքով, երբեմն էլ կաթիւկաթիւ, և ձնշելով միզանցքի պատերին առաջացնում է ցաւեր։ Պատահում է, թէ նազուադէպ, որ մէզը բոլորովին կապվում է։ Սրանից կարող է ծագել միզապարկի բորբոքումն, մէզի դողուց պարկի մէջ, ծակոցներ, ծանրութիւն փորի ստորին մասերում և այլն։ Մէզը երկար ժամանակ մնալով միզապարկում, իր կեղտերով և մնասակար լուծուածքներով մինչև անդամ կարող է առաջացնել արեան վարակումն և մահ։ Վերոցիշեալ ասածներից երեսում է, որ միզանցքի նեղութիւնը բաւական ծանը երեսյթ է։

#### 11. ԾԱԿՈՑՆԵՐ, ԱՅՐՈՑՆԵՐ ԵՒ ԱՆՀԱՇՈՅ ԶԳԱՑՄՈՒՅԹՆԵՐ ՄԻԶԱՆՑՔՈՒՄ

Լաւ չը բժշկված տրիպէրից յետոյ երկար ժամանակ, տարիներ ու տասնեակ տարիներ, միզանցքի մէջ երբեմն երբեմն զգացվում են ծակոցներ, ցաւեր և այլ աննօր-

մալ երևոյթներ, որոնք մեծ մասամբ կենդրոնանում են տրիպէրի խոցի տեղում: Յիշեալ ծակոցները աւելի զգալի են լինում սեռական յարաբերութիւններից, երազախաբից, հարբեցողութիւնից յետոյ, գարեջուր խմելիս և այլն: Երբեմն այս ցաւերն այնքան են սաստկանում, որ տարածվում են դէպի միզապարկը, յետանցքը, և հիւանդին թւում է, թէ սուր տրիպէրը նորոգվել է: Սակայն շուտով նրանք մեղմանում են և անցնում առանց բժշկութեան: Մի խօսքով տրիպէրով վարակված մարդը, նամանաւանդ միքանի անդամ հիւանդացած և բժշկված դէպէրում, երկար ժամանակ կրում է տրիպէրի թողած յիշատակները:

## 12. ԱՆԴԱՄԻ ԳԼԽԻ ԵՒ ԹԼՊԱՏԻ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ

Հիւանդի անմաքրութեան շնորհիւ տրիպէրի թարախը, հաւաքվելով թլպատի արանքում կարող է առաջացնել անդամի գըլիի և թլպատի ներքին պատերի բորբոքումն: Սա կոչվում է քալեանիտ: Այս հիւանդութեանը նպաստում է այն հանգա-

մանքը, երբ թլպատը շատ երկար է, ծածկում է անդամի գլուխը և ճեղքի նեղութեան պատճառով յետ չէ քաշվում, կամ թէ երբ թլպատը շատ կարճ է, միշտ անդամի գլխի յետեռումն է կծկված և առաջ չէ քաշվում ու ձածկում անդամը: Առաջին դէպէրում, այսինքն երբ թլպատը մէծ է և յետ չի քաշվում, թարախը ընկնելով նրա տակը, բորբոքում է, ուոցնում և առաջացնում թարախահոսութիւն: Այսպիսի դէպէրում իսկոյն պէտք է դիմել բժշկի, որը փոքրիկ օպէրացիայի միջոցով թլպատը կը կտրէ, յետ կը քաշէ և կը մաքրէ նրա տակը: Երկրորդ դէպէրում, այսինքն երբ թլպատը կարճ է, բորբոքվելով, նա ուոչում է, հաստ օղակների ձևով մնում է անդամի գլխի յետեռում: հասկանալի է, որ քայլելու ժամանակ շորերին քսվելով ուսոյցքը սաստիկ ցաւում է: Երբեմն էլ միաժամանակ ուռչում են և բորբոքվում թէ թլպատը և թէ



Նկար 5.

Տրիպէրից՝ երկար թլպատը և առանդամի գլուխը  
ուռչում էլ միաժամանակ ուռչում է: Երբեմն էլ միաժամանակ ուռչում են և բորբոքվում թէ թլպատը և թէ

անդամի գլուխը, և իհարկէ աւելի մեծ տանջանքներ պատճառում հիւանդին։ Այսպիսի գէպքերում իսկոյն պէտք է անկողին մըտնել և հրաւիրել մասնագէտ բժշկի։ Իսկ նախազգուշութեան համար անհրաժեշտ է օրական միքանի անդամ բօրակաթթուի (бօրная кислота) 20/0 գոլ լուծվացքով լուանալ անդամը, ծայրին դրած ունենալ մաքուր բամբակ, որը շուտ-շուտ փոխել և ձեռքերը լաւ



Նկար 6.

Յետ քաշուած և ուռած

թլպանը:

## 13. ԲՈՒԻԲՈՆ ՏՐԻՊԵՐԻՑ

Պատահում է, որ արիպէրի թարախը արեան կամ թէ աւշային անօթների միջոցով անցնում է և մտնում աճուկների փոքրիկ խուլերի։ մէջ, բորբոքում է նրանց, ուռցնում և առաջնում թարախակալութիւն, որը կոչվում է ըուզօն։ Հէնց որ նկատվում է փոքրիկ ուռոյցը աճուկի մէջ և ցաւ, իսկոյն պէտք է հանգիստ մնալ, աւելի լաւ է պառկած դրութիւն։ Որպէսզի թոյլ չը տալ

ուռոյցը ի մեծանալուն և թարախակալութան, պէտք է սառը կօմպրէսներ կամ թէ սառոյց դնել աճուկի վրայ։ Եթէ այսպիսով չէ անցնում, այն ժամանակ պէտք է նպաստել ուռոյցը շուտ հասունանալուն և բացվելուն։ Այս նպատակով օրական միքանի անդամ դրվում է տաք կօմպրէս կամ թէ կրտաւատի ծեծած ու եփած սերմը շորի մէջ լցրած։ Շատ քիչ գէպքերում հասունացած ուռոյցը ինքնիրան է պատռվում։ Աւելի լաւ է բուբօնի գէպքում իսկոյն դիմել բըժշկի, որը կըճեղքէ ուռոյցը, դուրս կը թողնէ թարախը և լաւ ախտահանելով վէրքը, կը բժշկէ հիմնաւորապէս։ Տնային գեղերը կամ թէ ինքնիրան բացված բուբօնի անուշադիր թողնելը վտանգաւոր են, որովհետև այդ գէպքում բուբօնը կը մնայ երկար ժամանակ, թարախահոսութիւնը չի կտրվի և կարող է առաջանալ արեան վարակում։



14. ՏՐԻՊԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ  
ՄԱՐՄՆԻ ՎՐԱՅ

Մինչև այժմ մենք նկարագրեցինք տրիպէրի և նրա արած ազդեցութիւնը մարմնի զանազան գործարանների վրայ։ Բացի վերոյիշեալ բարդութիւններից, տրիպէրը ունենում է և ընդհանուր վնասակար ազդեցութիւն ամբողջ մարմնի վրայ։ Տրիպէրով վարակված անձը դառնում է ջղային, դիւրազգաց, դիւրագրգիռ։ Նրա տրամադրութիւնը մեծ մասամբ լինում է մելամաղձու և վշտու։

Ապա տրիպէրը, առաւել ևս խրօնիքականը, ազդում է և սեռական կարողութեան վրայ։ Մարդու մէջ նուազում է կիրքը, էրէկցիան (անդամի կանգնումը) ուժեղ չէ լինում։ Ընդհանրապէս վերցրած, կրկնվող կամ խրօնիքական տրիպէրից յետոյ մարդ վաղաժամ թուլանում է սեռականապէս և երբեմն էլ զրկվում կարողութիւնից։



IV ԿԵՂԾ ՏՐԻՊԵՐ

Բացի վերոյիշեալ տրիպէրից կայ և միզանցքի մի ուրիշ տեսակ բորբոքումն, որ շատ նման է իսկական տրիպէրին։ Իրար յետելից միքանի անգամ կատարված, հարբած ժամանսկ կամ կնոջ ամսական արիւնհոսութեաններից կարող է միզանցքը բորբոքվել և թարախահոսութիւն սկսվել։ Սակայն այսպիսի տրիպէրը կարճատեն է և հանգիստ մընալով ինքնիրան անցնում է։ Նա կըչփում է կեղծ տրիպէր, որովհետեւ նրա թարախի մէջ չեն լինում սուտունակի բացիլներ, գօնոկներ։ ուստի թարախը վարակիչ չէ։ Կեղծ տրիպէրից հարկաւոր չէ վախենալ, քանի որ նա չէ ունենում ծանր բարդութիւններ։ Անհրաժեշտ է միայն հանգիստ մնալ, խուսափել խմիչքեղէնից ու գրգռումից։ Կեղծ տրիպէր առաջանում է նաև կընոջ բունոցից հոսող թարախահիւթից (ԾԵ-ԼԱ)։ ուրեմն, պարզ է, որ պէտք է խուսափել բէլի ունեցող կնոջ հետ մերձենալուց։

բաւոր մասնագէտ բժիշկներից մէկին։  
 Մինչդեռ գիւղացին կամ գաւառացին  
 միշտ հնարաւորութիւն չէ ունենում թող-  
 նել գործը, ծախսեր անել ու քաղաք  
 բնալ բժշկվելու։ Բացի այդ, կան մարդիկ,  
 թէկուզ հէնց քաղաքում ապրողներ, որոնք  
 ամուսնացած լինելով կամ սաստիկ ամաշ-  
 կոտ լինելով, չեն դիմում բժշկի։ Պարզ է,  
 որ այսպիսի դէպքերում հիւանդութիւնը ա-  
 ռաջադիմում է, բարդանում և ծածուկ կեր-  
 պով մաշում ամօթխած հիւանդին։ Ահա հէնց  
 յիշեալ մարդկանց համար էլ մենք կազմե-  
 ցինք այս գրքոյկը։ Այն մարդը, որ ինչինչ  
 պատճառներով չի դիմում բժշկին, կարող  
 է օգտվել այս գրքոյկից, միայն թէ զգոյշ,  
 խելացի ընտրութեամբ և ճշտորէն կատա-  
 րելով ցոյց տրված խորհուրդները։

Հէնց որ սկսվում են թարախահոսու-  
 թիւն, այրոց և ցաւեր, անմիջապէս պէտք  
 է թողնել ամենատեսակ ֆիզիքական աշ-  
 խատանք։ Հանգիստ գրութիւնը չի թոյլ տա-  
 վիս բորբոքման զարգանալուն, մինչդեռքայլե-  
 լը, զանազան շարժողութիւնները, ընդհակա-  
 ռակըն, աւելի են բորբոքում հիւանդութիւնը։

## V ՏՐԻՊԵՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Վերոյիշեալ մեր նկարագրութիւններից  
 պարզ երեսում է, որ տրիպէրը լուրջ հիւան-  
 դութիւն է, որը կարող է առաջ բերել բազ-  
 մատեսակ տառապանքներ։ Այդ պատճառով  
 երբէք չը պէտք է անուշադիր թողնել նրան,  
 համարելով մի թեթև ու չնչին ցաւ։ Զը  
 պէտք է դիմել տնային խաթեբայ հէքիմե-  
 րի, անմատչելի բժշկարանների և կամ բա-  
 րականանալ սրա նրա տուած ըէցէպտնե-  
 րով։ Այս ձանապարհով ոչ միայն հիւան-  
 դութիւնը չի բժշկվիլ, այլ ընդհակառակն  
 կը մնայ, կը հնանայ ու կը գառնայ խրօնի-  
 քական։ ցաւը կարող է թափանցել խորքերը  
 և գործը բարդացնել։

Քաղաքներում ապրող մարդիկ բժշկու-  
 թեան տեսակէտից շատ երջանիկ են, քան  
 թէ գիւղերում և աւաններում ապրողները  
 որովհետև քաղաքացին, վարակման դէպ-  
 քում, կարող է անմիջապէս դիմել հարիւ-

Ուստի և աւելի նպատակայարմար կը լինի առաջին օրերում պառկել։ Եթէ հիւանդը անհամբեր է, չի կարող պառկած մնալ, գունէ նա պէտք է քիչ ման գայ, խուսափէ շարժումներից։ հասկանալի է, որ բոլորովին արգելվում է պարել, ձի հեծնել, վէլօսիպէդ նստել, երկար ու բարձր սանդուղներ բարձրանալ և այն։ Սկզբից և եթ պէտք է գնել ամորձիքակապ և ձուաները կապել. այսպիսով նրանք կը մնան հանդիսա ու չեն բորբոքվիլ։ Ամորձիքակապը, որ կոչվում է սուսպէնզօրիում, պատրաստի է և ծախվում է դեղատներում 25—40 կոպէկով։



Նկար 5.

Չուաների կապը.  
սուսպէնզօ-  
րիում

Եթէ միզանցքի բորբո-  
քումը սաստիկ է, այրոցն ու  
ծակոցները այն աստիճան,  
որ շատ դժուարացնում են  
միզելը, լաւ կը լինի օրական  
մէկ անգամ ամբողջ վաննա  
ընդունել. Ջրի տաքութիւնը  
լինելու է 30%։ վաննայի մէջ

պէտք է նստել 15—20 րոպէ։ Աւելորդ է  
ասել, որ ցուրտ եղանակներին, ձմեռը,  
պէտք է վաննան ընդունել տաք սենեակում

և զգոյշ լինել մըսելուց։ Եթէ մեծ վաննա չը կայ, այն ժամանակ կարելի է վարվել հետեւեալ կերպով.—վերցնել մի բաժակ գոլ ջուր, կամ կամ 20% բորակաթթուի լուծուացք, բոլորն էլ 30—31% տաքութեան (ի հարկէ նրանցից որևէ մէկը առանձին, և ոչ թէ իրար խառնած), առնանդամը մէջը դնել ու պահել 5—10 րոպէ։ Այս միջոցով այրոցը զգալի չափով պակասում է։ Անմի-  
ջապէս պէտք է թողնել ոգելից խմիչքնե-  
րը, և կաթիլ անգամ չը խմել օղի, գինի,  
գարեջուր, որոնք տրիպէրից սիրված հն և  
նպաստում են թարախահոսութեան շատա-  
լուն և հիւանդութեան երկար դիմանալուն։  
Անչափ օգտակար ու բարերար ազդեցութիւն  
է անում կաթը, ուստի պէտք է խմել օրա-  
կան 4—6 բաժակ կաթ։ Կարելի է գործա-  
ծել բաց գոյնի թէյ, գաղը թողած լիմօնադ,  
զէլտէրեան և սառը մաքուր ջուր։ Սրանք  
նպաստում են մէզի աւելանալուն և միզանց-  
քը լուանալուն։ Սրդէն քանի անգամ կը կ-  
նեցինք, որ տրիպէրի թարախը վարակիչ է  
և ձեռքերի միջոցով կարելի է այս կամ այն  
գործարանը վարակել. այդ պատճառով հի-

ւանդը պէտք է դառնայ մաքրասէր. ամեն  
անդամ անդամը բռնելուց յետոյ պէտք է  
կարբօլեան սապօնով լաւ լուանայ ձեռքերը  
ու եղունկների արանքները։ Անպայման  
պէտք է խուսափել աչքերին ձեռք տալուց,  
քանի որ տրիպէրի թարախը շատ շուտ վա-  
վարակում է նրանց։ Որպէսզի անդամի գը-  
լուխը շորի հետ շիվելուց զերծ մնայ և սպի-  
տակեղէնը չը կեղտոտվի միզանցքից հոսող  
թարախից, անհրաժեշտ է մեծ կտոր մաքուր  
բամբակ դնել անդամի ծայրին, որը թարա-  
խոտվելուց յետոյ փոխել մաքուր բամբա-  
կով, յետոյ ձեռքերը լուանալ։

Ուտելիքի և խմելիքի մէջ հիւանդը  
պէտք է լինի չափաւոր։ Միանդամից շատ  
չուտել և ստամոքսը չը ծանրաբեռնել։ Փո-  
ռը չը պիտի կապ մնայ, այլ ամեն օր պէտք է  
դուրս ելնել։ Արգելվում է գործածել գըր-  
գուիչ նիւթեր, օրինակ քացախ, մանանեխ  
(գարչիցա), պղպեղ, շատ կծու—թթու և ա-  
ղի բաներ։ Լաւ է շուտ շուտ ուտել, մի-  
այն քիչ—քիչ, և կերածը լինի մննդարար  
կերակուր։ Տնարաւորութեան չափ քիչ  
գործածել դժուարամարս նիւթեր, որոնք են

տաւարի միս, հաց, կարտօփիլ, խմորեղէն  
և այլն։ Գիշերվայ քնելու անկողինը փա-  
փուկ չը լինի, այլ պարզ, մաքուր, չոր ու  
զով։ Սենեակի օդը պէտք է մաքուր պահել  
ցերեկը պատուհանները բանալով։ Տրիպէ-  
րի միջոցին արգելվում է սեռական յարա-  
բերութիւնը։ Սերմը գրգոռում է միզանցքի  
բորբոքված թաղանթը և բժշկութեան գոր-  
ծը դանդաղացնում։ Այս տեսակէտից էլ  
պէտք է աշխատել, որ գիշերը երազախար  
չը պատահի. դրա համար ցերեկը խուսա-  
փելու է կանանցից, չը խօսել ու չը լսել  
սեռական յառաբերութեան մասին, չը կար-  
գալ սիրահարական կամ թէ պօնօգրաֆիա-  
կան գրքեր, սինէմատօգրաֆներում չը դի-  
տել լկտի պատկերներ և այլն։

Ինչպէս գիտենք, սուր տրիպէրի սկզբ-  
նական շրջանում անդամի կանգնումը շուտ  
շուտ է լինում, որը շատ անհանգստացնում  
է հիւանդին. այդ բանից զերծ մնալու հա-  
մար լաւ կը լինի մէջքի վրայ չը քնել, այլ  
պառկել աջ թեկի վրայ. քնելուց առաջ ոչինչ  
շուտել. պառկելուց 2—3 ժամ առաջ խմել  
մի բաժակ կաթ. Եթէ անդամի կանգնումը

չի դադարում, դեղատնից վերցնել նշի կաթ (МИНДАЛЬНОЕ МОЛОКО) և օրական 3—4 անգամ ընդունել հացի գղալով: Եթէ սա էլ չի օդնի, վերցնել բրօմի լուծուածք (8 գրամ բրօմ, 200 գրամ զտած ջուր) և օրական 3 անգամ խմել հացի գղալով:

Սուրարիպէրի բորբոքման միջոցին, երբ միզանցքի այրոցն ու ցաւերը սաստիկ են, երբէք չի կարելի կատարել միզանցքի լուացումներ (սրսկումներ), որովհետև սրանք աւելի կը զօրեղացնեն բորբոքման երկոյթները: Պէտք է սպասել 7—10 օր, երբ բորբոքումը կը նուազի առողջապահական բոլոր խորհուրդները կատարելուց, այն ժամանակ միայն կարելի է մեծ զգուշութեամբ սկսել սրսկումները: Տրիպէրի բժշկութեան միջոցին միշտ հարկաւոր չէ լինում միաժամանակ թէ ներքին դեղեր ընդունել և թէ սրբսկումներ անել: Աւելի հիմնաւոր և վերջնականապէս են բուժում որոշ դեղերի լուծուածքների լուացումները: Մինչև այժմ բժշկութիւնը չի գտել մի դեղ, որ ներքուած անմիջապէս ազդէր գօնօկօկների վրայ: Գործածվող ներքին դեղերը, (օրինակ սանթա-

լի իւղը և զանազան բալզաֆներ) հիւանդութեան վրայ ազդում են կողմնակի կերպով: Նրանցից մէկը ներգործում է երիկամունքների վրայ և նրանց ստիպում շատ քանակութեամբ մէզ արաւադրել, որով միզանցը լուացվում և թարախը հեռացվում է, միւս դեղը միզանցքի բորբոքված թաղանթի վրայ հանգստացուցիչ ազդեցութիւն է. ունենում, և այլն: Զը պէտք մոռանալ, որ արիպէրի գէմ ընդունվող ներքին դեղերը չէ կարելի շատ երկար ժամանակ գործածել, որովհետև նրանք կարող են առաջացնել երիկամունքների բորբոքութիւն, որ աւելի վտանգաւոր հիւանդութիւն կը դառնայ, քան թէ ինքը՝ արիպէրը: Այդ պատճառով որևէ դեղ մի անգամ վերջացնելուց յետոյ ինքնագլուխ չը կը կնել, այլ հարցնել բժշկի խորհուրդը: Իսկ ով արդէն ունի երիկամունքների հիւանդութիւն, ոչ մի գէպքում չը պէտք է խմէ հակատրիպէրային դեղեր:

Գործածելու համար դեղաանից վերցնել սանթալի իւղը (сандаловое масло) և օրական 3 անգամ կաթով ընդունել 10-ա-

կամ կաթիլ (ոչ աւելի): Կամ թէ վերցնել կօպայսկի բալզամ, որից նմանապէս խմել 10-ական կաթիլ օրը 3 անգամ: Յիշեալ դեղբը բաւական էժան են ու մատչելի: Կան և արտասահմանեան պատրաստի դեղեր, որոնք աւելի բուժիչ են ու աւելի թանգ: Դրանցից լաւերն են Գօնօղան (Pil. gonosan) հապերը, որոնցից պէտք է ընդունել 2-ական հապ օրը երեք անգամ: Սանթալ Միդի հապերը, նոյնպէս 2-ական հապ, օրը 3-անգամ: Վերոյիշեալ բոլոր դեղերը պէտք է դործածել ուտելուց յետոյ, այսինքն առաւտեան թէյից, ճաշից և իրիկնահացից յետոյ, որովհետև նրանք կարող են խանգարել դատարկ ստամոքսը:

Տրիպէրի լուացումները կատարվում են առանձին գործիքով, որ կոչվում է սպրինցօվկա: Սա բաղկացած է ապակեայ գլանակից, որի մէջ շարժվում է խթանը (որշեն): Սպրինցօվկի ծայրին ամրացրած է բէզինի ծիծ: Սպրինցօվկաները լինում են զանազան մեծութեան, բայց առհասարակ լաւ է գործածել 5 խորանարդ սանտիմէտր բովանդակութեան գործիք: Անհրաժեշտ է


գիտենալ սպրինցօվկայի գործածութեան բոլոր կանոնները և զգուշութիւնները, հակառակ դէպքում կարելի է օգուտի փոխարէն վնաս պատճառել: Դործիքը գնելուց և տուն տանելուց յետոյ պէտք է եռուն ջրով, կարբութեան 5% կամ բորակաթթուկի 2% լուծվածքով լաւ լուանալ ինչպէս մէջը, այնպէս



#### Նկար 6.

Տրիպէրի սպրինցօվկան, այսինքն լուանալու գործիքը: Էլ դուրսը: Սրակումից առաջ պէտք է միգել և անդամը գոլ ջրով լուանալ: Դեղից մի քիչ լցնել մաքուր պնակի մէջ, առնել սպրինցօվկի մէջ է և ապա բէզինի ծայրը դէպի վեր ուղղել ու խթանը քիչ սեղմել, մինչեւ դեղի հետ մտած օդը դուրս կենէ: Ապա ձախ ձեռքով բռնել անդամը, աջ ձեռքով բէզինի ծայրը զգուշութեամբ դնել միգանցքին, այդպէս բռնել, իսկ աջ ձեռքի որևէ մատով շատ հանդարտ սեղմել խթանը: Եթե ամբողջ դեղը կը լցվի միզանցքը, սպրինցօվկան յետ քաշել, առաջուց սեղ-

մած ունենալով միզանցքի ծայրը, որպէսզի գեղը դուրս չը թափվի, Այսպէս բռնած պահել 3—5 րոպէ, իսկ յետոյ ձեռքը թողնել ու դեղը դուրս թափել: Ակզեներում այս լուացումը կատարել 3—4 անգամ. իսկ յետոյ թարախի նուազման հետ պակասեցնել և լուացումները, 3, 2 և մէկ անգամ օրը. թարախի անհետանալուն պէս բոլորովին վերջ տալ սրսկումներին: Թարախի կարգելը թողագատութիւն չը տայ հիւանդին ուտելիքի ու խմելիքի մէջ, որովհետև դա գեռ չէ նըշանակում, որ արիպէրը իսպառ բժշկվել է. Եթէ հիւանդը անմիջապէս սկսէ հարթել, ձի հեծնել, սեռական կրկնակի մերձեցումներ կատարել, շատ շուտ կը վերանորոգվի ցա-



ւը: Ուրեմն խորհուրդ կը տանք թարախի անհետանալուց յետոյ գեռ էլի 2—3 ամիս նոյն բէժիմը պահել, ինչ որ ցոյց ենք տըգել վերեւում:

Սրսկելու դեղերից մենք կը յիշենք միայն միքանի էական և ազդեցիկ դեղեր, ուրոնցից զատ մնացեալ հարիւրաւոր դեղերի գործածութիւնը միմիայն բժշկին պէտք է վերապահել:

Թոյլլուծվածք 1) Rp. Protargol... 0,5

Aq. Destillat... 200,0

MDS. Օրական միքանի անգամ սրբակել վերոյիշեալ ձեռվ:

Այս առաջին լուծվածքը վերջացնելուց յետոյ վերցնել երկրորդ աւելի ուժեղ լուծվածքը. 2) Rp. Protargol... 1,0

Aq. Destillat... 200,0

MDS. Օրսկել վերոյիշեալ ձեռվ:

—

Թոյլլուծ. 3). Rp. Zinci sulfocarbolic... 0,5

Aq. destillat... 200,0

MDS. Սրսկել օրը միքանի անգամ, պահելով 3—5 րոպէ:

Վերջացնելուց յետոյ վերցնել երկրորդ աւելի ուժեղ լուծ. 4) Rp. Zinci sulfocarbol... 1,0

Aq. destillat... 200,0

MDS. Սրսկել յիշեալ ձեռվ:

5) Rp. Kali hypermanganici... 0,06

Aq. destillat . . . . . 200,0

MDS. Սրսկել միքանի անգամ օրական: Եթէ միզանցքի ցաւերը չեն հանդարտվում, վերցնել հետևեալ դեղը.

6) Rp. Zinci sozojodol . . . . . 1,0  
Plumbi acetici . . . . . 0,3  
Tinct. opii simpl. . . . . 5,0  
Aq. destillat . . . . . 200,0

MDS. Սրսկել միզանցքը օրական երկու անգամ, պահելով դեղը 3—4 րոպէ:

Երբ սրսկման ժամանակ ձուաներից որևէ մէկումնկատվում է ուռոյցք և զգացվում ցաւ, իսկոյն պէտք է ընդհատել սրսկումները և հանդիստ մնալ: Ընդհանրապէս, հիւանդը երբէք 2—3 շաբաթից աւելի չը պէտք է կատարէ ինքնասրսկումներ, երբ նկատում է, որ թարախը չի պակասում և ցաւերը չեն վերջանում: Այնուհետև պէտք է դիմէ բժշկի, որը խոր լուացումներով ու զանազան գործիքներով հիմնաւորապէս կը բժշկէ:

Խրօնիքական տրիպէրի բացվելուն պէս կարելի է վերոյիշեալ դեղերից որևէ մէկով

սրսկումներ անել. միայն թէ օրական միայն մէկ անգամ:

Յանկալի է, որ թէ սուր և թէ խրօնիքական տրիպէրը միշտ յանձնել բժշկի խնամքին, որպէսզի միանգամից հիմնաւոր կերպով բժշկվել ու ազատ լինել յետագայ կրկնութիւններից: Շատ քչերն են բժշկվում իրանք իրանց արած սրսկումներով: Նրանք, որոնք զլանում են ժամանակին դիմել բժշկական օգնութեանը, յաճախ երկար տարիներ, նոյն իսկ մինչև մահ չեն ազատվում տրիպէրի ճանկերից:



## VI. ԴԵՂԵՐ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՏՐԻՊԵՐԻ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Երբ բորբոքվի միզապարկը և նրա մէջ առաջնան ծակոցներ, դողոցներ, մէզը սաստիկ պղտորվի, վերցնել գեղատնից Տալօլ 10-ական գրան 16 պարաշօկ և օրական ընդունել մի քիչ ջրով 4 պարաշօկ։ Կամ թէ վերցնել սրոտոպին 16 պարաշօկ 8-ական գրան իւրաքանչիւրը, օրական ընդունել 4 պարաշօկ մի բաժակ սէլտէրեան ջրով։ Շատ լաւ է և ցաւերը մեղմացնում է օրական մէկ անգամ 30% կիսավաննա ընդունելը (сидячая ванна): Հանգստացնում է նաև նշի կաթը, օրական 4 անգամ հացի գդալով։ Եթէ այս միջոցներով միզապարկի բորբոքումը չէ անցնում, իսկոյն պառկել և բըժիշկ հրաւիրել։

Բուլքոնի դէպքում վարվել այնպէս, ինչպէս ասել ենք սեպհական գլխում։


Երբ ձուն ուռչի, իսկոյն թողնել սրա-

կումներն ու պառկել։ Դեղատնից վերցնել սվինցուա вода մի սրուակ, նրա մէջ թըռչել մաքուր քաթան ու ծալած դնել ձուաների վրայ, այսպէս փոփոխել օրական միքանի անգամ։ Եթէ ցաւերը չը մեղմանան, լաւ կը լինի սառոյց դնել սառցապարկով։ Փորկապ ժամանակ ընդունել թեթև լուծողական, օրինակ գէնազէրչակի իւղ (касторовое масло) մի պօրցիա։ Եթէ ցաւը մեղմանայ, իսկ ձուի ուռոյցքը չիջնի, այն ժամանակ ուռած ձուին քսել վազելին և վրայից դնել տաք կօմպրէս, այսինքն տաք ջրում թոչած քաթան, որը նորոգել միքանի անգամ։ Իսկ երբ այս կերպ էլ չը բժշկվի ձուն, անմիջապէս դիմել բժշկի,

Միզանցքի նեղութեան և մէզի բոնվելու դէպքում անպայման պէտք է դիմել բժժկի, որը կատէտրի օգնութեամբ դուրս կը թողնէ մէզը, և ապա ժամանակի ընթացքում առանձին մետաղէ ձօղերով, որոնք կոչվում են բուժեր, աստիճանաբար կը լայնացնէ միզանցքը։ Բժշկութեան միջոցին լաւ կը լինի օրական մէկ անգամ 30% ամ-

բողջ վաննա ընդունել, մէջը նստելով 20—30  
րոպէ:

Աչքերի բորբոքման դէպքում օրական  
միքանի անգամ բորակաթթուի (борная кис-  
лота) գոլ լուծվածքով աչքերը լուանալ:  
Լոյսից անհանգիստ չը լինելու համար կրել  
սև ակնոցներ: Լինել խիստ մաքրապահ և  
առողջ աչքը պաշտպանել վարակվելուց:  
Լուրջ դէպքում անմիջապէս դիմել ակնա-  
բուժի:



Նկար 8.

Միզանցքի նեղութեան լավնացնելը բուժով:

Տրիպէրի միւս բարդութիւնների դէպքե-  
րում, օրինակ յօդերի, երիկամունքների և այլ  
բորբոքման ժամանակ, կամթէ միզանցքում  
խոշոր թարախակալութիւնների, թլպատի

ուռոյցքի դէպքերում առանց ժամանակ կորց-  
նելու իսկոյն և եթ դիմել բժշկի, վաղօրօք  
զանազան փորձեր չանելով բժշկաբանների  
ու տնային հէքիմների խորհուրդներով:



VII. ՏՐԻՊԵՐՈՎ ՈՒ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐՈՎ ՎԱՐԱԿՄԱՆ ԴԷՄ ՆԱԽԱԶԴՈՒՅԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ:

Քանի որ ներկայ հասարակական կազմի ու կեանքի գայթակղեցուցիչ պայմանների շնորհիւ, մարդիկ, կամքի ուժից զուրկ, չեն կարողանում բարոյական մաքուր շաւդով ընտանալ և անձնատուր են լինում սեռական ցոփ կեանքի, ուստի վեներական ախտերով չը վարակվելու համար պէտք է գիտենան միքանի պարզ ու հեշտ գործադրելի կանոններ:

Նախապաշտպանողական բոլոր միջոցներից և դեղերից ամենավստահելին է զօնումը: Սա չափազանց նուրբ, բարակ թաղանթ է, որը յարաբերութիւնից առաջ հազնվում է առնանդամի վրայ մինչև արմատը: Եթէ կինը վարակված լինի որևէ ախտով, սրա թոյնը կը կպչի թաղանթին և իսկոյն չի կարող նրա միջով թափանցել առնան-

դամի մէջ: Մերձաւորութիւնից յետոյ ըզդուշութեամբ պէտք է յետ քաշել գօնդոմը ու դէն գցել: Որպէսզի գօնդոմը հազցըելիս չը կպչի մսին ու չը ցաւեցնէ, լաւ կը լինի առաջուց քիչ վազելին քսել անդամին, յետոյ միայն հազցնել: Գօնդոմը լինում է թէ տղամարդի և թէ կանացի: Տղամարդինը արժէ 15—40 կոպէկ: Շատերը առարկում են, որ իբր թէ գօնդոմը թուլացնում է հաճոյըը, սակայն դա սխալ է.




Նկար 9.  
Տղամարդի գօնդոմը՝ ուլուրած.

թէկուզ հէնց այդպէս էլ լինի, աւելի լաւ է փոքը ինչ պակաս հաճոյը վայելել մի ըոպէում, քան թէ վարակվել զանազան ախտերով, ու յետոյ ամիսների, տարիների ընթացքում դառնութիւն քաշել:

1. Պէտք է խուսափել յարաբերութիւն ունենալ այն կնոջ հետ, որի մարմնի վրայ կան մեծ քանակութեամբ պզուկներ ու խո-

ցեր, որովհետև նըանք կարող են վարակիչ լինել:

2. Մերձաւորութեան միջոցին երբէք չը համբուրվել օտար կնոջ հետ, մանաւանդ շրթունքներից, որովհետև սիֆիլիսի և թոքախտի բացիները շատ գիւրին կերպով անցնում են բերանից բերան համբուրվելիս: Օտար կնոջ հետ յարաբերութիւնից յետոյ անմիջապէս պէտք է միզել: Մի բժշկի կարծիքով դա անպայման նպատակայարմար է և միակ միջոցն է վարակվելուց զերծ մնալու: Եթէ մերձաւորութեան ժամանակ հի-



Նկար 10.  
Կանանց գոնդոմ.

ւանդութեան թոյնը ներս է մտել աղամար-

դի միզանցքը, միզելիս նա յետ է մղվում մէզի հետ. իսկ սըսկելով կարելի է, ընդհակառակն, թոյնը տւելի խորը տանել և վարակել: Թէպէտ մերձաւորութիւնից անմիջապէս յետոյ անդամը կանգնած ըոպէին դժուար է միզել, բայց և այնպէս նրա թուլանալուն պէս պէտք է միզել: Միզելուց յետոյ հարկաւոր է լուացումն կատարել զանազան դեղային լուծուածքներով, որոնք ընդունակ են սպանել հիւանդութեանց բացիներին: Մի կողմ թոդնելով զօրեղ և թունաւոր դեղերի լուծուածքները, որոնք դեղանից արվում են միմիայն բժշկի ստորագրութեամբ, մենք կը թուենք այնպիսի միջոցներ, որոնց միշտ և ամեն ոք կարող է ձեռք բերել առանց ժամանակ կորցնելու կամ բժշկի ստորագրութիւնը՝ ստանալու: Դրանք են—գինու քացախ, լիմոնի հիւթ, կարմիր գինի, գինու սպիրտ, սապոնի սպիրտ, սապոն, խլորաջուր, խլորակիր, սովորական աղ, բորակ, կրաջուր, չիպ և այլն: Սրանցնց որևէ մէկը փոքր քանակութեամբ պէտք է լուծել մի քանի բաժակ սովորական կամ զտած ջրի մէջ և լուանալ սեռական գոր-

ծարանները։ Մերձաւորութիւնը վնասակար  
է կնոջ ամսական արիւնհոսութեան միջո-  
ցին։ Զը խօսելով կնոջ համար առաջացած  
ծանր հետևանքների մասին, կը յիշենք մի-  
այն տղամարդի վնասները. առնանդամի զը-  
լուխը կեղտոտ արիւնից կարող է բորբոք-  
վել, անդամաշկի տակ կարող են առա-  
ջանալ բշտիկներ. բացի այդ կարող է նո-  
րոգվել հին և խրոնիքական տրիպերը. մի-  
զանցքը կարող է բորբոքվել և առնանդամի  
գլուխը, ուոչեայսինքն կառաջանայ բալեա-  
նիտ, որի մասին վերում էլ խօսել ենք։  
Լաւ կը լինի սպասել արեան ընդհատվելուց  
դեռ էլի 3 օր, ապա մերձենալ։ Վտանգա-  
ւոր է մերձաւորութիւն ունենալ հարբած  
ժամանակ։

## ՑԱՆԿ

I. Ընդհանուր տեսութիւն	4—6
II. Տրիպերի վարակումը	7—19
III. Տրիպերի բարդութիւնները	14—30
IV. Կեղծ տրիպեր	31—31
V. Տրիպերի բժշկութիւնը	32—45
VI. Բարդութիւնների բժշկութիւնը	46—49
VII. Տրիպերով չը վարակվելու նախազգու- շութեան կանոնները	50—55



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀՀ ԳԱԱ ՊՈՂԻ ՊՈՂԻ ՊՈՂԻ ՊՈՂԻ  
7/31 1922  
Ա. ԱՅՐԱԿԱՆ ԱՅՐԱԿԱՆ ԱՅՐԱԿԱՆ

Յարուղիւն (Արտէմ) Եսայեանի լոյս տեսած  
աշխատասիրուղիւնները

---

1.	Խորտակուած սէր (վէպիկ) գինը . . . . .	30	կ.
2.	Գրբացի ստրուկներ (պատկեր) գ. . . . .	5	»
3.	Կեանքի բօմանից (վէպիկ) գ. . . . .	25	»
4.	Էմիլ Զօլա (փոքրիկ տեսութիւն) գ. . . . .	5	»
5.	Լօխմանի հէքիմը (պատկեր) գ. . . . .	8	»
6.	Բաֆֆի (համառօտ տեսութիւն) գ. . . . .	10	»
7.	Կեանքի խորշերից (պատկերներ) գ. . . . .	20	»
8.	Առաջին մուրացկանութիւնը (պատ). գ. . . . .	8	»
9.	Արբեցողի զատիկը (պատկեր) գ. . . . .	3	»
10.	Թշուառներ (պատկեր) գ. . . . .	8	»
11.	Միենոյն դագաղումք. տպ. (պատկերա- զարդ) հայ-թրք. կոփւներից . . . . .	8	»
12.	Սիրոյ Յարութիւնը (պատկեր) գ. . . . .	10	»
13.	Հայ կտրիճները (պատկեր հայ-թրք. կոփւ). 7		»
14.	Տղամարդի սեռական կեանքը (բժշկական)	30	»

Թարգմանութիւններ

1.	Անիւտա (Զեխովից) գինը . . . . .	3	կ.
2.	Դիմակ (Զեխովից) գ. . . . .	5	»
3.	Նինիի համար գ. . . . .	3	»
4.	Ճապոնիա գ. . . . .	25	»
5.	Արբեցողութեան դէմ գ. . . . .	15	»
6.	Կին և նրա տնտեսականի դրութիւն կլար թետկինի գ. . . . .	15	»
7.	Մշտական զօրք և միլիթիա . . . . .	12	»

Դիմել Թիֆլիս «Գուտտենբերգ» գրավաճա-  
ռանոցին կամ Թիֆլիս, Городская Управа, конт-  
ролеру водопровода А. Есаяնց.

Գումարով գնողներին մեծ զեղչ:

116983

«Ազգային գրադարան



NL0279844

